

**ՄՇՏԱՂԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԱՄՓՈՓ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

Մշտաղիտարկումների օրյեկտը	Մշտաղիտարկումների վայրը	Ցուցանիշը	Մշտաղիտարկումների տեսակը	Հաճախականությունը	Միջինացված արդյունքը ¹
1	2	3	4	5	6
Մթնոլորտային օդ	Բացահանք	Անօրգանական փոշի (SiO ₂ 20-70%)	Չափում ավտոմատ սարքերով	Աշխատանքների ընթացքում, յուրաքանչյուր շաբաթ	0.02մգ/մ ³
Մակերևութային ջրեր	Նախատեսված չէ				
Ստորգետնյա ջրեր	Նախատեսված չէ				
Հողային ծածկույթ	Արտադրական հրապարակի տարածք	Նավթամթերքներ, քիմիական կազմ	Դիտարկում, նմուշարկում	2022 թվականի ընթացքում, նավթամթերքների պարունակությունը ամսական մեկ անգամ, քիմիական կազմը՝ տարեկան մեկ անգամ	Նավթամթերքների արտահոսքի հետքեր չի դիտարկվել: Հողի նմուշում արձանագրվել են. Al 32565մգ/կգ, Si 89040գ/կգ, P <50մգ/կգ, Cl 1014 մգ/կգ, S 7571մգ/կգ, K 9344մգ/կգ, Ca

¹Մթնոլորտային օդում անօրգանական փոշու պարունակությունը (միջինացված ցուցանիշը) չի գերազանցում ՀՀ շրջակա միջավայրի նախարարության հետ համաձայնեցված վնասակար արտանետումների ՄԹԱ նորմատիվների նախագծով սահմանված առավելագույն գումարային կոնցենտրացիաները

					55387մգ/կգ, Ti 3707մգ/կգ, V 302մգ/կգ, Cr 168մգ/կգ, Mn 867մգ/կգ, Fe 38208մգ/կգ, Co <5մգ/կգ, Ni 12մգ/կգ, Cu 60մգ/կգ, Zn 86մգ/կգ, As 9մգ/կգ, Se <5մգ/կգ, Rb 55մգ/կգ, Sr 277մգ/կգ, Y 24մգ/կգ, Zr 161մգ/կգ, Nb 11 մգ/կգ, Mo 171մգ/կգ, Ag <5 մգ/կգ, Cd <5 մգ/կգ, Sn <5 մգ/կգ, Sb <5մգ/կգ, W 9մգ/կգ, As <5 մգ/կգ, Pb 19մգ/կգ, Bi <5 մգ/կգ, Th <5մգ/կգ, U<5 մգ/կգ, LE 760821մգ/կգ
Վայրի բնություն,	Տեղամասի տարածք	Տեսակային կազմ	Դիտարկում,	2022 թվականի	Տեղամասի

կենսամիջավայր, կարմիր գրքում ընդգրկված, էնդեմիկ տեսակներ			նկարագրում	ընթացքում, տարեկան մեկ անգամ	տարածքին բնորոշ է կիսա- անապատային բուսականությու նը ներկայացված է օշինդրա- էֆեմերային տեսակներով՝ օշինդր բուրավետը (<i>Artemisia fragrans</i> Willd.), այծակն զլանաձև (<i>Aegilops</i> <i>cylindrica</i>), անապատասեզ (<i>Eremopyrum</i>), վառվռուկ (<i>Alyssum</i>), փշամանդիկ (<i>Atraphaxis</i>), անմեռուկ (<i>Xeranthemum</i> <i>squarrosum</i>), երիզախոտ երկարամազը (<i>Taeniatherum</i> <i>crinitum</i>) և ավելաբույս գետնատարածը (<i>Kochia prostrata</i>): Կաթնասուննե- րից տեղամասի
---	--	--	------------	------------------------------------	---

					շրջանում դիտարկվել է աղվես, դաշտամկներ:
Աղմուկ և թրթռում	Նախատեսված չէ				
Ոչ վտանգավոր թափոններ	Նախատեսված չէ				
Վառելանյութերի պահեստարաններ	Հանքավայրի տարածքում վառելանյութերի պահեստարաններ չկան				
Ցիանային լուծույթների օգտագործման հետ կապված ենթակառուց- վածքներ	Հանքավայրի տարածքում ցիանային լուծույթների օգտագործման հետ կապված ենթակառուցվածքներ չկան				
Լեռնատրանսպոր- տային սարքավորումների աշխատանքային վիճակ	Բոլոր սարքավորումները անցել են տարեկան տեխնիկական ստուգում				

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Տեղամասի տեղադիրքը. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջան, Կաքավաձոր գյուղից մոտ 4.3 կմ հարավ:

Երկրաբանական կառուցվածքը. Կաքավաձորի հանքավայրի «Դարի Քար» տեղամասի շերտագրական կտրվածքը ներկայացված է հետևյալ տեսքով (ներքևից-վերև):

Վերին պլիոցեն: Տեղամասի տարածքի շերտագրական կտրվածքի մերկացված մասի ամենահին ապարները ներկայացված են Արագածի շերտախմբի վերին դարսաշերտի օլիվինային և դոլերիտային կազմի անդեզիտաբազալտներով, որոնց արտավիժումը կապված է Արագածի հրաբխային գործնեության հետ: Անդեզիտաբազալտների ծածկոցի հզորությունը մոտ 50 մ է: Մակրոսկոպիկ դրանք ներկայացված են ծակոտկեն, հոծ, ճեղքավորված, երբեմն խոռոչավոր, հիմնականում մուգ մոխրագույն տարատեսակներով: Հետախուզական հորատանցքերով այս անդեզիտաբազալտները հասված չեն:

Միջին չորրորդական: Տեղամասի սահմաններում անդեզիտաբազալտները մասնակիորեն ծածկված են արթիկի տիպի հրաբխային տուֆերի ծածկոցով, որոնք վերագրվում են այս հասակին:

Տեղամասի հրաբխային տուֆերը ներկայացված են հիմնականում մուգ մոխրագույն և վարդագույն տարատեսակներով: Իրենց գունավորմամբ, կազմով և դեկորատիվ հատկություններով նման են երևան-լենինականյան տիպի տուֆերին

Տուֆերի հաստվածքը մեղմաթեք անկում է հարավ-արևելք՝ մոտ 8՝ անկյան տակ: Երևական սահմաններում տուֆերի հաստվածքի տեղադրման խախտման երևույթներ չեն հայտնաբերվել: Տուֆերի հաստվածքի ընդհանուր հզորությունը նախնական դիտարկումներով տատանվում է 20.0-ից 25.0 մ-ի սահմաններում, կազմելով միջինը՝ 22.0-23.0 մ: Տուֆերի հաստվածքը ներկայացված են թույլ ճեղքավորված մուգ մոխրագույն, սևավուն տուֆերով: Վերջիններս աստիճանաբար անցնում են թարմ, թույլ ճեղքավորված տուֆերի (օգտակար հանածո):

Տուֆերի հաստվածքի հզորությունների տատանումները պայմանավորված է պալեոտեկտոնիկ անհարթություններով և հողմահարման գործոններով:

Տուֆերի հաստվածքում առկա ճեղքավորվածությունը ծագումնաբանորեն կապված է հիմնականում հրահեղուկ զանգվածի սառեցման (անջատման ճեղքեր) և նորագույն տեկտոնական շարժումների հետ: Տեկտոնական ծագման ճեղքերը սահմանափակ տարածում ունեն, սեյսմիկ բնույթի են և հաճախ համընկնում են անջատման ճեղքերին: Այս տարաբնույթ ճեղքերի հաստումներն առաջացնում են մեծաբեկոր՝ հիմնականում պրիզմանման մենաքարեր:

Ժամանակակից առաջացումները ներկայացված են դեյուվիալ փուխր-բեկորային, տուֆերի և անդեզիտաբազալտների բեկորներ պարունակող ավազակավային, ավազախճային նստվածքներով: Սրանց հզորությունը տատանվում է 0.6-1.0 մ սահմաններում, կազմելով միջինը 0.8 մ: Հողաբուսական շերտը թույլ է զարգացած, ներկայացված է խոտաբույսերի արմատներ պարունակող շագանակագույն հողերով, որոնց հզորությունը չի գերազանցում 0.1-0.2մ-ը՝ միջինը կազմելով 0.15մ:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների մեթոդաբանությունը.

«ԴԱԸԻ ՔԱԸ» տեղամասի տուֆերի երևակումում կատարվելիք երկրաբանահետախուզական աշխատանքների նախագիծը կազմված է ըստ «Երկրաբանահետախուզական աշխատանքների նախագծի և նախահաշիվների կազմման հրահանգ»-ի պահանջների: Համաձայն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2021 թվականի օգոստոսի 11-ի թիվ 06-Ն հրամանի հավելված 2-ով սահմանված տուֆի հանքավայրի դասակարգման կիրառման հրահանգի՝ A կարգին վերագրելու համար հետախուզական փորվածքների միջև հեռավորությունը սահմանված է 100-200մ, B կարգի համար՝ 200-300մ և C₁ կարգի համար՝ 300-400մ:

Հաշվի են առնված հետախուզվող տեղամասի երկրաբանական կառուցվածքը և երկրաբանահետախուզական աշխատանքների կատարման լեռնատեխնիկական պայմանները: Նկատի ունենալով երևակման պարզ երկրաբանական կառուցվածքը, օգտակար հանածոյի մորֆոլոգիական ձևը և չափսերը, տեղանքի ռելիեֆը և այլն: Հետախուզական աշխատանքները նախատեսվում է իրականացնել մինչև 25մ խորությամբ 9 հորատանցքերով, որոնց միջոցով կուսումնասիրվի և կնմուշարկվի տուֆերի հաստվածքը: Ընտրված հետախուզացանցը հետախուզական փորվածքների միջև 38–136.0մ

հեռավորությամբ է, որը թույլ կտա հետախուզված պաշարները գնահատել արդյունաբերական A կարգով:

Օգտակար հանածոյի ֆիզիկամեխանիկական հատկությունների ուսումնասիրության նպատակով նախատեսվում է յուրաքանչյուր հորատանցքից վերցնել մինչև 5.0մ երկարությամբ հանուկային նմուշներ: Ընդ որում հորատանցքերը նախատեսվում է նմուշարկել անընդհատ տիրույթներով,

Յուրաքանչյուր հետախուզագծի վրա հորատանցքերի միջոցով օգտակար հաստվածքը կուսումնասիրվի ամբողջ հզորությամբ: Նախատեսվում է տոպոգրաֆիական և երկրաբանական հանույթ, ինչպես նաև փորձնական բացահանքի անցում, նմուշարկում, ֆիզիկամեխանիկական լաբորատոր փորձարկումներ և ուսումնասիրություններ:

Նախապատրաստական շրջան, նախագծի կազմում

Մինչ նախագծային փաստաթղթերի կազմելը պետք է ծանոթանալ ֆոնդային և հրատարակված նյութերին, գործող հրահանգներին և ԳՕՍՍ – երին, ինչպես նաև կատարել երկրաբանական որոնողական աշխատանքներ, առանձնացնելով հետախուզման համար տարածքներ:

Տոպո - երկրաբանահանույթային աշխատանքներ

Սույն նախագծով նախատեսվում է կատարվել է տեղամասի տարածքի 1:1000 մասշտաբի տոպոգրաֆիական հանույթ մոտ 3.71հա մակերեսով տարածքում: Նախատեսված աշխատանքների իրականացման ընթացքում, անհրաժեշտության դեպքում կկատարվի վերոհիշյալ տոպոգրաֆիական հիմքի ճշտագրում, բոլոր հետախուզական փորվածքների և երկրաբանական սահմանների գործիքային տեղադրմամբ, որի հիմքի վրա կկազմվի տեղամասի երկրաբանական քարտեզը:

Մինչև նախագծա-նախահաշվային աշխատանքների կատարումը արդեն իսկ լիցենզավորված մասնագետի կողմից երևակման սահմաններում իրականացվել է 1:1000 մասշտաբի տոպո-մարկշեյդերական աշխատանքներ 3.71հա տարածքի վրա:

Հորատման աշխատանքները կիրականացվեն սյունակային հորատման ուղղաձիգ հորատանցքերի հորատման միջոցով: Հորատումը կկատարվի կարծր համաձուլվածքային թագիկներով, 132մմ և 112մմ տրամագծերով, ԶԻԼ131 տիպի ինքնագնաց հորատող հաստոցով:

Հետախուզվող տեղամասում օգտակար հանածոյի եզրագծման և ըստ խորության ուսումնասիրման համար նախատեսվում է հորատել 9 հորատանցք մինչև 25մ խորությամբ: Ծրագրով նախատեսված ընդհանուր 225 գծ.մ ծավալով հորատման աշխատանքները մոտավոր են, որը ենթակա է փոփոխման կախված երկրաբանական աշխատանքների արդյունքից: Հորատահանուկի նվազագույն ելքը՝ 80-85%:

Հորատառող հաստոցի տեղակայում տեղահանում

Նախագծով նախատեսվում է I-ին խմբի 9 հորատանցքերի հորատում ԶԻԼ131 մակնիշի ինքնագնաց հորատող հաստոցով: Նախատեսվում է հորատող հաստոցի 9 տեղակայում և տեղահանում:

Հետախուզական փորվածքների փաստագրում

Մանրամասն երկրաբանական փաստագրման ենթակա են հորատանցքերի հորատահանուկը և փորձնական հանույթի բացահանքը:

Երկրաբանական փաստագրման աշխատանքները նախատեսվում է կատարել 1:100 մասշտաբով: Դրանց ծավալները հետևյալն են ըստ տեսակների.

- հորատահանուկի փաստագրում 225.0 գծ.մ
- փորձնական բացահանքի փաստագրում 60.0 մ

Փորձնական բացահանքի անցում

Տուֆերի լեռնային զանգվածից պատքարի ելքի տոկոսը որոշելու համար նախատեսվում է մեկ փորձնական բացահանքի անցում՝ լեռնային զանգված 864.0մ³ ընդհանուր ծավալով (60.0մx12.0մx1.2մ), որից 150.0մ³ թարմ չհոմնահարված տուֆերից:

Նշված աշխատանքների ընթացքում կճշտվի հումքի արդյունահանման և տեղափոխման ընթացքում կատարված ծախսերը, որոնք կդրվեն հանքավայրի արդյունաբերական գնահատման հիմքում:

Նմուշարկում

Նմուշարկումն իրականացվելու է հորատանցքերի հորատահանուկից, բնական մերկացումներից ու բացահանքից:

Օգտակար հանածոյի ֆիզիկամեխանիկական հատկությունները որոշելու նպատակով նախատեսվում է վերցնել 40 հանուկային նմուշ մինչև 5.0մ երկարությամբ, 2 մենաքար բացահանքից, ինչպես նաև 2 նմուշ պետրոգրաֆիական ուսումնասիրությունների ու 2 նմուշ քիմիական կազմը որոշելու համար:

Լաբորատոր ուսումնասիրություններ

Վերցված նմուշները կենթարկվեն համապատասխան փորձարկումների, համապատասխան լիցենզավորում ունեցող ընկերության լաբորատորիայում:

Ֆիզիկամեխանիկական հատկանիշները կուսումնասիրվեն 42 նմուշներով, քիմիական կազմի վերլուծությունները 2 և պետրոգրաֆիական ուսումնասիրությունները 2 նմուշների միջոցով:

Հիդրոերկրաբանական և ինժեներաերկրաբանական ուսումնասիրություններ

Հետախուզվող տեղամասի ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանների պարզաբանման նպատակով երկրաբանահետախուզական աշխատանքների ժամանակ նախատեսվում է կատարել համապատասխան ուսումնասիրություններ և դիտարկումներ:

Հորատման հրապարակների և ճանապարհների շինարարություն

Հաշվի առնելով տեղամասի հարթ ռելիեֆը և արդեն իսկ գոյություն ունեցող դաշտամիջյան ճանապարհները, երկրաբանական ուսումնասիրության ընթացքում հորատման հրապարակների և ճանապարհների շինարարություն չի նախատեսվում:

Օգտակար հանածոյի ռադիոմետրիական ուսումնասիրություններ

Օգտակար հանածոյի ճառագայթահիգիենիկ հատկությունները պարզաբանելու համար դաշտային աշխատանքների ընթացքում և հորատման աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է կատարել ռադիոմետրիական չափումներ երևակյան ամբողջ տարածքում СРП-68-01 ռադիոմետրիական չափիչ սարքի միջոցով:

Հողերի ռեկուլտիվացիա

Հողի վերին շերտի պահպանության նպատակով նախագծով նախատեսվում է փորձնական հանույթի ժամանակ հանել հողի շերտը, պահեստավորել, իսկ աշխատանքների ավարտից հետո լանդշաֆտի վերականգնման նպատակով ծածկել հողաշերտով:

Նախատեսվում է հողի բերրի շերտի պահման պայմաններն իրականացնել համաձայն ՀՀ կառավարության 02.11.2017թ.-ի N1404-Ն որոշման, որով սահմանվել են հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և պակաս արդյունավետ հողերի բարելավման համար հողի բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները:

Վերականգնումը իրականացվելու է ձեռքով: Ռեկուլտիվացիայի ենթակա հողաբուսական շերտի ծավալը կազմում է 108.0մ³ (60.0մ x 0.15մ x 12.0մ):

Ռեկուլտիվացիոն աշխատանքների իրագործման համար ընկերության կողմից նախատեսվում է 216000 դրամ գումար:

Շրջակա միջավայրի հակիրճ նկարագիրը.

Գեոմորֆոլոգիական տեսակետից տեղամասի տարածքը ներկայացնում է միջին բարձրության լեռնային հարթություններ, որին բնորոշ է լավաներով ծածկված՝ սարավանդներով և ձորակներով կտրտված լանդշաֆտը: Հանքավայրի շրջանը գտնվում է Արագածի հրաբխային զանգվածի հարավ-արևմտյան ստորոտին, Թալինի սրավանդի և Ախուրյան ու Արաքս գետերի միջև տեղադրված՝ Կարմրաշենի սարավանդում:

Կարմրաշենի սարավանդն աստիճանաբար ցածրանալով հարավ-արևելյան ուղղությամբ՝ ձուլվում է Արարատյան դաշտին: Ունի բլրա-ալիքավոր ռելիեֆ, թույլ մասնատված մակերևույթ: Կան լավային հոսքեր, մինչև 100մ հարաբերական բարձրությամբ խարամային կոներ:

Մողանքային երևույթներ հանքավայրի տարածքում չեն արձանագրվել, ինչը պայմանավորված է տարածքը կազմող տուֆային առաջացումների ֆիզիկա-մեխանիկական հատկություններով:

Հանքավայրի շրջանում երկրաշարժերի հնարավոր ուժգնությունը կազմում է 8-9բալ, իսկ առավելագույն հորիզոնական արագացումը՝ 0,4g:

Հանքավայրի տարածաշրջանի կլիման չոր ցամաքային է: Մակերևութային բարձրությունների մեծ տատանումների շնորհիվ կլիմայական պայմանները ցածրադիր և բարձրադիր մասերում բազմազան են՝ հուլիսի միջին ջերմաստիճանը կարող է տատանվել +6-ից +24°C: Հուլիսին օդի միջին ջերմաստիճանը տատանվում է +20-ից+24°C միջակայքում: Առավելագույն ջերմաստիճանը կարող է հասնել +34°C: Հունվարին օդի միջին

ջերմաստիճանը տատանվում է -14-ից -26°C միջակայքում: Նվազագույն ջերմաստիճանը կարող է հասնել -38°C-ի: Նույն օրինաչափությամբ, լանջերն ի վեր փոխվում են մթնոլորտային տեղումների քանակը և կարող են տատանվել 400 մմ-ից մինչև 1000մմ սահմաններում: Քամիների գերակշռող ուղղությունը հիմնականում հյուսիսային և հյուսիսարևելյան են: Մոտակա Թալին դիտակայանի տվյալներով միջին տարեկան խոնավությունը 66% է, ամենաշոգ ամսվա միջինը՝ 36%, ամենացուրտ ամսվա միջինը՝ 69% :

Տարածքի հիմնական ջրային միավորը Սելավ Մաստարան է՝ Սևջուր գետի աջ վտակը: Գետի երկարությունը 98 կմ է, ավազանը՝ 1580կմ²: Մկիզբ է առնում հարավարևմտյան լանջից, մոտ 2500մ բարձրությունից : Հոսում է դեպի հարավ, ապա՝ հարավարևելք: Վերին հոսանքում հունն ունի մինչև 30մ խորություն: Մնուցումը գերազանցապես անձրևային է: Ունի անկայուն, սելավային ռեժիմ, երբեմն ցամաքում է (30-50 օր): Հայտնի է 2-3 տարին մեկ կրկնվող ուժեղ ցեխաքարային սելավներով:

Շրջանի տարածքն անտառազուրկ է: Տարածված են շագանակագույն, բարձրադիր գոտում նաև՝ քարքարոտ սակավազոր սևահողերը, ծածկված հացազգի, տարախոտահացազգի, երբեմն մարգագետնատափաստանային բուսականությամբ:

Տարածքին բնորոշ է կիսաանապատային և տափաստանային լանդշաֆտները՝ հացազգային և տարախոտա-հացազգային բուսականությամբ: Գերակշռում են *Festuca*, *Koeleria*, *Stipa*, *Galium*, *Elytrigia* տեսակները:

Համաձայն բուսաբանական հետազոտությունների այս տարածաշրջանին բնորոշ են լեռնային տափաստանների բուսատեսակները, որոնք հիմնականում ներկայացված են հետևյալ ֆորմացիաներով՝ փետրախոտային (*Stipa*), շյուղախոտային (*Festuca*) և ցորնուկային (*Bromus*): Լայնորեն տարածված են տրագալկանտները՝ *Astragalus microcephalus* - Գազ, *A.aureus* Ա.նսկեզոծ, *A.lagurus* - Գ.նապաստակի: Տափաստանային թփերից գերակշռում են՝ *Spiraea* - Սսպիրակի, *Spiraea*, *A.rupestre* – Սոխ ժայռի և *Acantholimon* – ոգնաթուփ - ի տեսակները: Բարձր լեռնային մասերում, լեռնամարգագետնային հողերի վրա տարածվում են մերձալպյան և ալպյան մարգագետիններ: Մարգագետնային տափաստանները ներկայացված են՝ *Festuca ovina* – Շյուղախոտ ոչխարի, *Koeleria cristata* – Կելերիա

սանրանման, *Phleum phleoides* – Միզախոտ սիզախոտանման տեսակներով և տարախոտային մարգատափաստանների ֆորմացիաներով:

Տարածաշրջանում անողնաշարավոր կենդանիներից հանդիպում են՝ մորեխների (*Oedopoda coerulescens*, *Oe. Miniata*, *Pholidoptera*), ծորիդների (*Phytodrymadusa armeniaca*) տեսակներ, երկթևանիներ (*Tomomyza araxana*, *Bombilus schelkovnikovi*): Կարիճներից հանդիպում է միայն դեղին կարիճը (*Buttus caucasicus*):

Սողուններից այս գոտուն բնորոշ են բարեկազմ օձագլուղ մողեսը (*Ophisops elegans*) և Անդրկովկասյան մողեսիկը (*E.pleskei*) և այլն:

Կաթնասուններից ամենուրեք տարածված են նապաստակը (*Lepus europaeus*), աղվեսը (*Vulpes vulpes*), գայլը (*Canis lupus*): Լայն տարածում ունեն կրծողների կարգի ներկայացուցիչներ, որոնցից են մկնանմանների (*Muridae*) ընտանիքի տեսակները, հատկապես դաշտամկները (*Microtinae*): Թռչուններից առավել լայն տարածում ունեն ճնղուկանմանները (*Passeriformes*):

Հայցվող տարածքում կենդանիների վերգետնյա և ստորգետնյա բներ, որջեր չեն դիտարկվել:

Կաքավաձորի տուֆերի հանքավայրի «Դարի քար» շրջանում չկան բնապահպանական տեսանկյունից խոցելի կամ բնության հատուկ պահպանվող տարածքներ:

Բնապահպանական միջոցառումների բնութագիր. Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- Արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում:
- Լեռնային զանգվածի և ճանապարհների թրջում փորձնական արդյունահանման ժամանակ: Տեխնիկական ջորը գնվելու է մոտակա Կաքավաձոր գյուղից և ավտոցիստեռնով տեղափոխվելու է տեղամասի տարածք:
- Կեղտաջրերի հավաքումը դաշտային հորատի պ զուգարանում, որը աշխատանքների ավարտից հետո դատարկվելու է հատուկ ծառայության ուժերով, դատարկված փոսը լցվելու է քարերով: Ծառայությունը մատուցվում է պայմանագրային հիմունքներով: Պայմանագիրը նախատեսվում է կնքել աշխատանքների թույլտվությունը ստանալուց հետո:
- Խախտված տարածքների ռեկուլտիվացիա փորձնական բացահանքի տարածքում:

- Ընդերքօգտագործման թափոնների կառավարում: Տեղամասի տարածքում հորատման աշխատանքների ժամանակ առաջացող օգտագործված հորատման թագիկները հավաքվելու և տեղամասից հեռացվելու են հորատման աշխատանքները իրականացնող մասնագիտացված ընկերության կողմից, դա կազմում է հորատման գործընթացի բաղկացուցիչ գործողություն: Նավթամթերքների և քսայուղերի մնացորդները (ըստ ՀՀ բնապահպանության նախարարի 25.12.2006թ.-ի N430-Ն հրամանի հավելվածի՝ քսայուղերը դասվում են վտանգավորության 4-րդ դասին, իսկ սպառողական հատկությունները կորցրած յուղերը՝ վտանգավորության 3-րդ դասին) հավաքվելու են հատուկ անթափանց տակառների մեջ, աշխատանքների ավարտից հետո հանձնվելու են մասնագիտացված ընկերությանը՝ վերամշակում իրականացնելու նպատակով: Վերամշակման ծառայությունը մատուցվում է պայմանագրային հիմունքներով: Պայմանագիրը նախատեսվում է կնքել աշխատանքների թույլտվությունը ստանալուց հետո: Կենցաղային աղբը ((ըստ ՀՀ բնապահպանության նախարարի 25.12.2006թ.-ի N430-Ն հրամանի հավելվածի՝ կենցաղային աղբը դասվում է վտանգավորության 4-րդ դասին) կհավաքվի առավելագույնը 35լ տարողությամբ հատուկ պարկերի մեջ և կտեղափոխվի մոտակա աղբահավաք կետեր, որտեղից դրանք պարբերաբար համայնքի Կոմունալ ծառայության կողմից տեղափոխվում են շրջանի աղբավայր: Փորձնական բացահանքի տարածքից հեռացված բուսահողը ամբողջ ծավալով կօգտագործվի ռեկուլտիվացիոն աշխատանքների համար:

- Բուսական աշխարհի ուսումնասիրությանն ու պահպանությանն ուղղված միջոցառումներ՝ ՀՀ կառավարության 2014թ. հուլիսի 31-ի N781-Ն որոշման պահանջներին համապատասխան: Երևանի տարածքում Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գրքում (այսուհետ՝ կարմիր գիրք) գրանցված տվյալ բուսական տեսակի նոր պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում դրանց պահպանության նպատակով՝

- 1) առանձնացնում են օգտագործման նպատակով տրամադրված տարածքում պահպանվող գոտիներ, որոնք ունեն տեղական նշանակություն և անհրաժեշտ են կարմիր գրքում գրանցված բուսատեսակների՝ սույն կետում նշված նոր պոպուլյացիաների կենսունակության ապահովման նպատակով.

- 2) ժամանակավորապես սահմանափակում են առանձնացված պահպանվող գոտիներում տնտեսական գործունեության որոշ տեսակներ, եթե դրանք կարող են բերել

նշված բուսատեսակների աճելավայրերի վիճակի վատթարացմանն ու պոպուլյացիաների կենսունակության խաթարմանը:


- Աղմուկի և թրթռումների վերահսկողություն: Մշտական աշխատատեղերով տարածքներում աղմուկի (ձայնի) առավելագույն մակարդակը չպետք է գերազանցի 95դԲԱ, իսկ արտադրական կազմակերպությունների մշտական աշխատատեղերում՝ 80դԲԱ: Թրթռումների սահմանային թույլատրելի մակարդակը Z առանցքով չպետք է գերազանցի 115դԲԱ, իսկ X-Y առանցքներով՝ 112դԲԱ:

- Նախատեսվում է առաջնորդվել ՀՀ Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով:

- Անձնակազմի նախնական ուսուցում և հրահանգավորում բնապահանական օրենսդրության և տեխնիկային անվտանգության կանոնների վերաբերյալ :

- Հրդեհային անվտանգության կանոնների պահպանություն, տարածքում հրշիջման միջոցների առկայություն (բահեր, ավազ, տեխնիկական ջուր, կրակմարիչ):

ԿԱՔԱՎԱԶՈՐԻ ՏՈՒՖԵՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ՄՇԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԿԵՏԵՐԻ
ԻՐԱԴՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶ



Մ լ մ ի Ն Ղ

Արտագծված է 1:50000 մասշտաբի տոպոգրաֆիական հեկթոգրամային քարտեզից և կառուցված է կոորդինատային ցանցը ըստ ArmWGS-84 համակարգի